



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 17 » « դեկտեմբեր » 2019 թ. № 741-Չ

**ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ**

1. Նշանակել ծառայողական քննություն ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիոն հակազդման դեպարտամենտի պետի գրության դեպքով (2019 թվականի նոյեմբերի 18-ի N 7/1-2400):

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերն են՝

1) Ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիոն հակազդման դեպարտամենտի պետին ուղղված պատասխան գրության լիարժեքությունը,

2) Նախարարության ջրերի ռեսուրսների կառավարման գործակալության կողմից կազմված 2019 թվականի նոյեմբերի 27-ի N 5/18.1/1862 գրությունը նախարարի խորհրդական Հ. Մարտիկյանի հետ չհամաձայնեցնելու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով.

1) Վահե Զիլավյան - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար, խմբի ղեկավար,

2) Խաչատուր Խաչատրյան – իրավաբանական վարչության պետ,

3) Վիգեն Անանյան – նախարարության իրավախորհրդատու նախարարի:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 5 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

12/17/2019

X 

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

«<sup>17</sup>» *դեկտեմբեր* 2019թ.  
ք. Երևան